# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ,Դավիթ Բեկի 2
Հեռ. 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 50-Ա

### ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ կետով.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Նարեկ համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 12 նիստի օրակարգի հետևյալ հարցերը `

1. Նարեկ համայնքի 2019 թվականի մատուցվող ծառայությունների համար վարձավճար սահմանելու մասին:
2. Համայնքի սեփականություն համարվող գյուղ.նշանակության հողերը և արոտավայրերը վարձակալության տալու մասին:
3. Նարեկ համայնքի 2019 թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին:
4. Նարեկ համայնքի համայնքապետարանի և մանկապարտեզի 2018 թվականի գույքագրման արդյունքների ամփափման և հաստատման մասին:
5. Նարեկ համայնքի 2019 թվականի բյուջեի նախնական քննարկում և հաստատում:
6. Նարեկ համայնքի 2019 թվականի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
7. Համայնքային սեփականություն համարվող գյուղատենտեսական նշանակության հողի օտարմանը թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:
8. Պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերի օտարմանը համաձայնություն տալու մասին:

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ կողմ
ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ կողմ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ կողմ
ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, Դավիթ Բեկի 2
Հեռ.098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 51-Ն

### ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետով

Նարեկ համայնքի ավագանին որոշում է՝

Նարեկ համայնքի 2019 թվականի մատուցվող ծառայությունների համար սահմանել վարձավճարներ համայնքի յուրաքանչյուր ընտանիքի համար հետևյալ չափով.

1. Կոյուղու սպասարկում

1.1. Մինչև երեք շնչից բաղկացած ընտանիքը ամսեկան վճարում է 250 ՀՀ դրամ /տարեկան՝ 3000 ՀՀ դր./:

1.2. Երեք շունչ և ավելին՝ 500 ՀՀ դրամ /տարեկան 6000 ՀՀ դր./:

2. Խմելու ջուր ՝ 1մ$^3$- 60 ՀՀ դրամ

3. Մանկապարտեզ հաճախող երեխաների վարձավճար՝

3. 1. Ընտանիքից մեկ երեխայի մանկապարտեզ հաճախելու դեպքում- 5000 ՀՀ դրամ

3. 2 . Երկու երեխայի դեպքում - 8000 ՀՀ դրամ

3. 3. Այլ համայնքներից մեկ երեխայի համայնքի մանկապարտեզ հաճախելու դեպքում ՝ 15000 ՀՀ դրամ

3. 4.Այլ համայնքներից՝ նույն ընտանիքից, երկու երեխայի հաճախելու դեպքում՝ 25000 ՀՀ դրամ:

4. Հանդիսությունների սրահի տրամադրում.

4.1. Սգո արարողության դեպքում

ա) Համայնքի անդամներից - 30000 ՀՀ դրամ

բ)Այլ համայնքներից 50000 ՀՀ դրամ:

4.2. Հարսանյաց և այլ առիթների դեպքում

ա) Համայնքի անդամներից - 50000 ՀՀ դրամ

բ) Այլ համայնքներից - 80000 ՀՀ դրամ:

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ կողմ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ կողմ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ կողմ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ —

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, Դավիթ Բեկի 2
Հեռ.098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 52-Ա

## ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂ.ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով վարձակալության տրամադրել հողատարածքներ,սահմանել մեկնարկային վարձավճարներ հետևյալ չափերով.

1. Գյուղ.նշանակության IV կարգի ջրովի վարելահող, մեկնարկային գին սահմանել՝ կադաստրային արժեքի 25,42 %-ի չափով - 1հա 300000 ՀՀ դրամ:
2. Գյուղ.նշանակության IV կարգի ջրովի վարելահող, մեկնարկային գին սահմանել՝ կադաստրային արժեքի 12,66 %-ի չափով - 1հա 150000 ՀՀ դրամ:
3. Գյուղ.նշանակության IV կարգի կորիզավոր, մեկնարկային գին սահմանել՝կադաստրային արժեքի 30,13 %-իչափով- 1հա 400000 ՀՀ դրամ:
4. Գյուղ.նշանակության արոտներ, խոտհարքներև, <<այլ>> հողեր, մեկնարկային գին սահմանել՝ կադաստրային արժեքի 1,48 %-ի չափով- 1հա 1000 ՀՀ դրամ:
5. Գյուղ.նշանակության անջրդի վարելահողերը, մեկնարկային գին սահմանել՝ կադաստրային արժեքի 2,04 %-ի չափով 1հա - 5000 ՀՀ դրամ:

ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

ԱՎԴԻՇՈՎ ԱՆԴՐԵՅ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ